

## Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՋՐԱՅԻՆ ՊԱՇՏՈՒՄԵՐԻ ՅՈՒՐԱՑՈՒՄ»  
Կառավարության Նպատակային Ծրագիր

### Ներածություն

Էլեկտրաէներգիայի սպառման արդի մեծացող պահանջները, ինչպես նաև գազի և նավթի գների բարձրացման համաշխարհային միտումները ստիպում են փնտրել էներգիայի արտադրության նորանոր աղբյուրներ: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է այնպիսի աշխարհագրական տարածքում, ուր բացակայում են չվերաստեղծվող էներգակիրները, սակայն, միևնույն ժամանակ գտնվում են բազում գետեր և գետակներ, որոնք օժտված են էական ջրային պաշարներով և կարող են հանդիսանալ էլեկտրաէներգիայի այն հիմնական աղբյուրը, որը կապահովի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը էլեկտրաէներգիայով և հետևաբար՝ էներգետիկ անվտանգությունը: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ջրային Պաշարների Յուրացումը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) ամբողջական իրականացումը կլուծի ոչ միայն այս հիմնախնդիրը, այլ նաև մեծ խթան կհանդիսանա ողջ տնտեսության զարգացման համար:

1995-1997 թվականներին կատարվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրաէներգետիկ պաշարների գնահատում, առանց հաշվի առնելու Հազարի գետի ավազանը՝ իր վտակներով: Նախնական կանխատեսումները վստահորեն թույլ են տալիս հաստատել, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսությունը կարող է ստանալ լրացուցիչ 260 մլն կվտ էլեկտրաէներգիա, իսկ Հազարի գետի ավազանի հաշվառմամբ՝ 360 մլն կվտ: Էներգիայի նկատմամբ պահանջարկը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում 2008 թվականի համար նախատեսված է 230-240 մլն կվտ սահմաններում: Համաձայն կանխատեսումների՝ էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը 2015 թվականին կազմելու է 300 մլն

կվտ: Այսպիսով էլեկտրաէներգիայի արտադրությունը 2015 թվականին ոչ միայն ամբողջությամբ կբավարարի տնտեսության ներքին պահանջները, այլև հնարավորություն կընձեռի արտահանել լրացուցիչ էլեկտրաէներգիան տարեկան մոտ 150 մլն կվտ ծավալով (հաշվի առնելով Սարսանգ հիդրոէլեկտրակայանի արտադրած 100 մլն կվտ էներգիան): Նախնական հաշվարկներով՝ դա կբերի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության մոտ 1.65 մլրդ դրամ լրացուցիչ եկամուտ (ըստ գործող սակագների 1 կվտ էներգիան արժե 11 դրամ), իսկ մեծածախ գների կանխատեսվող 15 դրամի հաշվառմամբ՝ 2.25 մլրդ դրամ:

## Նպատակը

Էլեկտրաէներգիայի ոլորտի զարգացումը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկ անկախությունը և ազգային անվտանգությունն ապահովելու նպատակով:

## Խնդիրները

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով անցնող գետերի վրա փոքր հիդրոէլեկտրակայանների համակարգի կառուցում և հետագա շահագործում (հավելված 1)
- Հիդրոէներգետիկայի ոլորտում աշխատող ձեռնարկությունների տեխնիկական վերազինում՝ առաջատար տեխնոլոգիաների հիման վրա
- Տեղական և օտարերկրյա ներդրումների ներգրավում և ուղղում ոլորտի զարգացմանը

## Մասնակիցները

Պետական պատասխանատու-համակարգող	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչություն
Պետական պատվիրատու	«Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերություն

Հիմնական կատարողներ	<ul style="list-style-type: none"> <li>• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի արտադրական ենթակառուցվածքների վարչություն</li> <li>• Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ:</li> </ul>
---------------------	--

**Հիմնական նպատակային ցուցանիշները**

Ծրագրի հիմնական նպատակային ցուցանիշը հանդիսանում է էլեկտրաէներգիայի արտադրման այնպիսի քանակ, որը թույլ կտա ամբողջովին ապահովել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության էլեկտրաէներգիայի նկատմամբ պահանջարկը, ինչպես նաև արտահանել:

Էլեկտրաէներգիայի արտադրության ներկա տարեկան ծավալը	100 մլն կվտ
Էլեկտրաէներգիայի նկատմամբ ներկա տարեկան պահանջարկը	230-240 մլն կվտ
Էլեկտրաէներգիայի նկատմամբ 2015 թվականին կանխատեսվող տարեկան պահանջարկը	300 մլն կվտ
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հիդրոէներգետիկ պոտենցիալը	350 մլն կվտ
Էլեկտրաէներգիայի արտադրության տարեկան թիրախային ծավալը	350 մլն կվտ

**Ծրագրի փուլերը և իրականացման ժամկետները**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու փուլով, որոնց ընդհանուր տևողությունն է ութ տարի՝ 2008-2015 թվականներ:

I Փուլ

<p>Փուլի նախատեսվող տևողությունը՝</p> <p>Նախատեսվող աշխատանքները.</p>	<p>2-3 տարի(2008-2011 թվականներ)</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հինգ փոքր (մինչև 10 Մվտ) հիդրոէլեկտրակայանների կառուցում թարթառ գետի և Թրղի գետից թարթառ գետը անցնող ջրատարի վրա.</li> <li>• Երկու հիդրոէլեկտրակայաններից բաղկացած սանդղաջրվեժի կառուցում թարթառ գետի վրա՝ Մատաղիս գյուղի շրջակայքում: Այս հիդրոէլեկտրակայաններից բաղկացած սանդղաջրվեժը կօգտագործի Մատաղիսի ջրամբարի պաշարները (հատկապես այս ջրամբարի և ջրատարերի համակարգի առկայությունն է, որ բացառիկ արդյունավետ է դարձնում ինչպես էներգետիկայի արտադրությունը այս սանդղաջրվեժի վրա, այնպես էլ շինարարության ծախսերը):</li> <li>• Երեք հիդրոէլեկտրակայաններից բաղկացած սանդղաջրվեժի կառուցում Թրղի-Թարթառ ջրանցքի վրա: Այս սանդղաջրվեժի արդյունավետությունը պայմանավորված է ոռոգման նպատակով կառուցվող ջրագծի առկայությամբ(այս ջրագծի կառուցումը գտնվում է ավարտական փուլում)</li> </ul>
<p>Փուլի թիրախային ցուցանիշները</p>	<p>Առաջին փուլի իրականացման արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կավելանա մինչև 210-225 մլն կվտ/ժամ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության էլեկտրաէներգիայի պահանջների 85-90%-ը: Սա թույլ կտա պետությանը տնտեսել մոտ 1.5 մլրդ դրամ, որը կուղղվի էներգետիկայի ոլորտի հետագա զարգացմանը, այդ թվում՝ Ծրագրի հետագա ֆինանսավորմանը:</p>

## II Փուլ

Փուլի նախատեսվող տևողությունը	3-4 տարի (2012-2015 թթ.)
Նախատեսվող աշխատանքները	Այլ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով անցնող գետերի վրա
Փուլի թիախային ցուցանիշներ	Երկրորդ փուլի իրականացման արդյունքում էլեկտրաէներգիայի արտադրությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կավելանա մինչև 350 մլն կվտ/ժամ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսության էլեկտրաէներգիայի պահանջները 100%-ով արտահանել մոտ լրացուցիչ արտադրված էլեկտրաէներգիան:

### Ֆինանսավորման աղբյուրները

Ծրագրի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է օգտագործել հետևյալ աղբյուրները.

- ա) «Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերի թողարկման միջոցով հավաքագրված ներդրումներ
- բ) «Արցախ ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերության սեփական միջոցներ
- գ) Առևտրային բանկերից ներգրված վարկեր
- դ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցներ:

### Ծրագրից սպասվելիք արդյունքներն ու տնտեսական արդյունավետությունը

Ծրագրի իրականացումը հնարավորություն կտա ներդաշնակորեն զարգացնել տնտեսության այլ ճյուղերը, էապես կավելանան աշխատատեղերի քանակը Մարտակերտի շրջանում, որն իր հերթին թույլ կտա կարգավորել վերաբնակեցման գործընթացը և նշանակալիորեն լուծել շրջանի սոցիալ տնտեսական հիմնախնդիրները: Բացի այդ Ծրագիրը կավելացնի բյուջեի եկամտային մասը:

## **Ծրագրի համար անհրաժեշտ միջոցառումները**

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ջրային Պաշարների Յուրացման Ծրագրի» արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

1. նշանակել «Արցախ ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերությանը նախատեսված նախագծա-շինարարական աշխատանքների համակարգող

2. աջակցել «Արցախ ՋԷԿ» փակ բաժնետիրական ընկերության կողմից բաժնետոմսերի թողարկմանը և հրապարակային տեղաբաշխմանը, որը նախատեսվում է իրացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց շրջանակներում:


**ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ**

**Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

КАРТА - СХЕМА ГИДРОЭНЕРГЕТИЧЕСКИХ РЕСУРСОВ НКР

М 1:200 000



Основные показатели МГЭС

№ п/п	Наименование	Расчетный расход м³/сек.	Расчетный напор м	Установлен. мощность мВт	Среднегодовая выработка млн. кВт.ч
<b>Бассейн р. Карлар</b>					
1.	МГЭС-1 на р. Карлар	0.66	215	1.1	5.2
2.	МГЭС-2 на р. Карлар	1.7	139	1.9	8.4
3.	МГЭС-3 на р. Карлар	3.4	80	2.2	9.8
4.	МГЭС-4 на р. Карлар	3.8	53	1.6	6.3
5.	МГЭС-5 на р. Карлар	4.2	45	1.5	5.7
<b>Бассейн р. Ишхангагет</b>					
6.	МГЭС-1 на р. Ишхангагет	0.66	160	0.8	3.1
7.	МГЭС-1 на р. Алмачай	1.1	91	0.8	3.2
8.	Дома ГЭС-3	2.24	90	1.75	6.4
9.	МГЭС-2 на р. Ишхангагет	2.4	86	1.7	6.7
10.	МГЭС-3 на р. Ишхангагет	4.0	28	0.9	3.0
<b>Бассейн р. Варанда</b>					
11.	МГЭС на р. Варанда	0.45	121	0.44	2.7
<b>Бассейн р. Хачингагет</b>					
12.	МГЭС на р. Хачингагет	4.0	103	3.3	16.7
<b>Бассейн р. Тертер</b>					
13.	ГЭС-1 на р. Тертер	25.0	39	7.8	29.8
14.	ГЭС-2 на р. Тертер	60.0	84	40.3	130.7
15.	ГЭС-3 на р. Тертер	60.0	84	40.3	130.7
16.	Маалгиз МГЭС-1 на р. Тертер	60.0	24	11.5	37.3
17.	Маалгиз МГЭС-2 на р. Тертер	10.0	18.7	1.6	6.9
*Маалгиз МГЭС на переборке р.Туги в Сарсангское водохранилище					
18.	МГЭС-1	1.8	291	4.2	15.9
19.	МГЭС-2	1.8	292	4.2	15.9
20.	МГЭС-3	1.8	292	4.2	16.3
Всего:				132.1	460.8

- УСЛОВНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ
- Головные улазы, проектируемые
  - Головные улазы, существующие
  - - Здания ГЭС, проектируемые
  - - Здания ГЭС, существующие
  - Деревни
  - Водоохранилища, проектируемые
  - Водоохранилища, существующие
  - Существующая автодорога

ПРИМЕЧАНИЯ:

- Данный чертеж читать с черт. №964-9-2:19.
- Первоочередные МГЭС в таблице основных показателей выделены зеленым цветом.

964-9-1

Уточнение технико-экономических показателей гидроэнергетических ресурсов НКР

Гидроэнергетические ресурсы НКР

Карта - схема.

Разраб.	Арзуманян	Провер.	Навоян	Зам.НП	Каралетян	ГИП	Хачиан	Тех. дир.	Саркисян
								стадия	лист/листов
								С	
								МИНЭНЕРТО РА ГЭАО	АРМГИДРОЭНЕРГОПРОЕКТ
								С. ЕРЕВАН	ГТО 1999г.

Лист № подл. Подпись и дата. Взам. инв. № 87486 от 10.04